

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Ա. ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՅԵՏՈՅ

ԿԵՄԱՆՔԸ ԿԻՒՐԻՆԻ ՄԷՁ, 1919

Թէ՛ իբր հայ եւ թէ՛ իբր Կիւրինցի, պարտականութիւն զգացած եմ կարգ մը կարեւոր տեղեկութիւններ տալ, յուսալով որ Պատրիարքարանի կամ հայրենակիցներու միջոցաւ հարկ եղածը կը տնօրինուի: Գրեթէ մինչեւ 15 օր առաջ հոս կը գտնուէին 40-50 Հայեր, որոնցմէ հազիւ 3-4 այրեր վիւոռորութենէ վերադարձած: Ասոնք իրենց ապրուստի միջոցը խորհելէ ուրիշ մտածում ունեցողներ չեն, իսկ մնացեալները Կիւրին մնացած եւ տեղացի թուրքերուն գործերը տեսնելով ապրած են, դրեթէ թշուառ վիճակի մէջ: Այս օրերս 60 հոգի, կիներ եւ սղտիկներ, Կիւրին, վերադարձած են եւ օրէ օր ուրիշներ ալ հասնելու վրայ են: Կիւրիցի տուներում 80% փլցուած եւ հայ քաղերը բոլորովին աւերակ դարձած ըլլալով, կառավարութիւնը հազիւ կրոյած է գանոնք տեղաւորել: Գալով նիւթական վիճակնուն, ինքնին հասկնալի է: Նկատի ունենալով Կիւրինի հին դիրքը, զինուորագրութեան միջոցին տեղացի թուրքերուն անգութ ընթացքը եւ հինգ տարիէ իվեր դուրսերը քաջած թշուառութիւննին, գրեթէ ամբողջն ալ հացի կարօտ վիճակի մէջ են: Ամիս մը ետքը թշուառներուն թիւը կրկնապատկուած եւ թշուառութիւնը ծայր աստիճանի հասած պիտի տեսնենք: Կիւրինի բանտարկութեան եւ Սէվքիաթի խնդրին մէջ առաջնակարգ դեր ունեցող դաշմադամ Շառուպ եւ զապթիա մէմուրը Գեամիլ Սվազ կը պտըտին, մնացեալներն ալ Կիւրին են:

Պ. Յ. ՇԵՀԻՐԵԱՆ

### ՀԱՆԴՈՒՐԺՈՂՆԵՐՆ ԱՆԳԱՄ ԿԸ ՀԵՌԱՆԱՆ (1924-1928)

... Զինադադարի յայտարարութեամբ թուրքիոյ զանազան մասերէն Կիւրին վերադարձած եւ կամ երբէք չի տարադրուած 25-30 հայրենակիցներ, որոնք ցարդ չէին ուզած բաժնուիլ եթէ ոչ իրենց կալուածներէն, գոնէ իրենց պապերու ժառանգ թողած հողերու եւ տուներու աւերակներէն եւ կը մնային հայրենիքի մէջ: Ասոնց մէջ 24 անձ, ութ օր առաջ հանգիստ պայմաններու տակ հասած են Հալէպ ու տեղաւորուած Միութեանս կայանին մէջ, ոմանք իրենց ազգական-ծանօթներու կողմէ հիւրասիրուած ու ոմանք ալ աղքատներու յատուկ ձրի սենեակներու մէջ: Ասոնք կը նկարագրեն, թէ ինչպիսի անխղճութեամբ մը վայրագ բորենիներու ճանկին տակ աւերակի վերածուած է մեր պաշտելի հայրենիքը, ու բանտի վերածուած մեր հաւատքով օժուոն հայրու աղօթատեղին՝ Մայր Եկեղեցին. իսկ միւս երեք եկեղեցիները հիմնա-յատակ կործանուած:

Ասոնք որ ցարդ կրցեր էին հանդուրժել ամէն տեսակ դժուարութեանց, ի խնդիր պատառ մը հացի, այլեւս յուսահատ հոն ապրուելու բացարձակ անկարելիութեանց առաջ, հարկադրուած են ձեռք առնել կամաւոր տարադրու-թեան ցուպը. միանալու համար իրենց երկիցս տարադրուած ու անճիտուած հայրենակիցներուն:

Իպրոցական տարիք ունեցող վեց սղտիկները արդէն իսկ արձանագրել տրուեցան Աղդ. Վարժարան:

(Մամուլ)